ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 85

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքը (Պռոշյան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Նաիրի համայնքի (Պռոշյան բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքը (Պռոշյան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի (Պռոշյան բնակավայրը) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-053-0324-0025 կադաստրային ծածկագրով 0.107 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /խաղող/ հողեր	07-053-0324-0025 կադաստրային ծածկագրով 0.107 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Պռոշյան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Լ.Առաքելյան

Երևան, « 7 » «մարտի» 2025 թ.